ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «26» 03 2018թ № 210-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ, ՓՈԽԱՐԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 1324-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 667-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1229-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի «դ» ու «ը» ենթակետերը՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալների միջև աշխատանքների բաշխումը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալների միմյանց փոխարինելիությունը կազմակերպել հետևյալ կերպ՝

1) նախարարի առաջին տեղակալ — նախարարի տեղակալ
Տիգրան Խաչատրյան — Էմիլ Տարասյան

2) նախարարի տեղակալ — նախարարի տեղակալ
Հովհաննես Ազիզյան — Ավագ Ավանեսյան

3. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հուլիսի 17-ի N 667-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 1324-Ա հրամանի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի գլխավոր խորհրդական Պավել Սաֆարյանին վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության, «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության և «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատանքների համակարգումը:»:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալների փոխարինելիության, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգման և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2012 թվականի փետրվարի 21-ի N 162-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 667-Ա հրամանը:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարի 2018 թվականի
մարտի 26-ի N 210-Ա հրամանի

հ/հ	**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալ Տիգրան Խաչատրյան**	**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Էմիլ Տարասյան**	**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Հովհաննես Ազիզյան**	**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյան**
1.	Ճյուղային տնտեսական քաղաքականության վարչություն	Ինովացիոն տեխնոլոգիաների զարգացման վարչություն	Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչություն	Ռազմավարական ծրագրավորման և մոնիթորինգի վարչություն
2.	Գործարար և ներդրումային միջավայրի զարգացման քաղաքականության վարչություն	Որակի ենթակառուցվածքների զարգացման վարչություն	Եվրամիության և Առևտրի համաշխարհային կազմակերպության վարչություն	Տնտեսական հետազոտությունների կենտրոն
3.	Ներդրումների ներգրավման և համակարգման վարչություն	Փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցության և զարգացման վարչություն	Միջազգային համագործակցության վարչություն	
4.	«Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ	Մտավոր սեփականության գործակալություն		
5.	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ	Լիցենզավորման և թույլտվությունների գործակալություն		
6.	«Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ	«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ		
7.		«ՓՄՁ ՁԱԿ» հիմնադրամ		